ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ - ՈՒՂՂՈՒՄ ԿՈՆՖԼԻԿՏԸ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հանցագործությունը սոցիալական երևույթ է, որը հատուկ է բոլոր հասարակություններին: Մարդկության զարգացման ընթացքում, չնայած հետազոտողների ձեռնարկած փորձերին, չի հաջողվել ապացուցել ո՛չ հանցագործ վարքագծի փոխանցումը ժառանգականության մեխանիզմների միջոցով, ո՛չ էլ մարդաբանական, գենետիկական և որևէ այլ հատկանիշներով դրա պայմանավորվածությունը, թեպետ այդ բոլոր գործոններն էլ ինչ-որ չափով նպաստում են դրա առաջացմանը[1]: Հանցագործ վարքագիծը հիմնականում սոցիալական հենք ունի: Հասարակությունը փորձում է սոցիալականացման մեխանիզմների օգնությամբ իր անդամների մեջ ձևավորել այնպիսի գիտակցություն և վարքագիծ, որոնք ներդաշնակ են իր իդեալներին ու արժեքներին, սակայն քանի որ գործընթացին մասնակցում են տարբեր սուբյեկտներ, ու քանի որ, այն ոչ միայն կազմակերպված ու վերահսկվող է, այլև տարերային, արդյունքը ոչ միշտ է համապատասխանում հասարակության սպասումներին: Մարդիկ անհատներ են, և նրանց անհատական առանձնահատկությունների ազդեցությամբ էլ ոմանց մեջ ձևավորվում է հանցագործ վարքագիծ: Հետևաբար իրավացի է ֆրանսիացի մտածող է. Դյուրկհայմը՝ ենթադրելով, որ քանի դեռ կլինեն հասարակությունները, կլինեն և հանցագործություններ: Մոլորություն է մտածելը, որ ժամանակի հետ մարդիկ ավելի կիրթ ու օրինապահ կդառնան, հետևաբար հանցագործությունների թիվը հետզհետե կնվազի, քանի որ քրեագիտության զարգացման շնորհիվ կսկսեն որպես հանցագործություն որակվել վարքի այնպիսի դրսևորումները, որոնց համար մինչ այդ պատիժ չէր նախատեսվում[2]:

Ազատազրկումը հանցագործությունների դեպքում կիրառվող ամենատարածված պատժաձևն է: Հանցագործներին դատապարտելով ազատազրկման՝ մարդկանց թվում է, թե լուծում են հանցագործութ-

---

[1] Տե՛ս **Ломброзо Ч.** Преступный человек. М., 2005, **Ферри Э.** Уголовная социология. М., 2005, «Crime and Justice». Ed. by L. Razinowicz and M.Wolfgang. Volume 1, Basic Book Inc. Publishers, **Гидденс Э.** Социология. М., 2006, էջ 94-104, «The Blackwell Encyclopedia of Sociology». Ed. by G.Ritzer, Blackwell Publishing, v. 2, էջ 822-825:

[2] Տե՛ս **E. Durkheim**, Crime as a Normal Phenomenon.- «Crime and Justice». Ed. by L. Radzinowicz and M. Wolfgang, էջ 659:

յուններից ազատվելու խնդիրը: Քրեագիտությունն առանձնացնում է ազատազրկման երեք հիմնական գործառույթ՝ հատուկ կանխում, ընդհանուր կանխում և ուղղում: Առաջինի նպատակը հանցագործին նոր հանցանք կատարելու հնարավորություններից զրկելն է: Երկրորդինը՝ սաստել բոլոր նրանց, ովքեր ունեն կամ կարող են ունենալ հանցավոր մտադրություններ: Երրորդի նպատակն է ուղղել հանցագործին, որպեսզի պատիժը կրելուց հետո նրա միջից արմատախիլ արվեն նոր հանցագործություններ կատարելու մտադրությունները[3]: Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ ազատազրկումն ինքնին չի լուծում նշված խնդիրներից և ոչ մեկը: Եթե ազատազրկման միջոցով դատապարտյալին զրկում ենք իր նախկին միջավայրում հանցագործություն կատարելու հնարավորությունից, ապա նույնը չի կարելի ասել նոր՝ բանտային միջավայրում հնարավոր հանցագործությունների կանխման մասին: Ազատազրկման հաստատություններում գտնվում են տարբեր հանցագործությունների համար դատապարտված մարդիկ, և նրանց կուտակումը այդ փոքրիկ տարածքում ձևավորում է քրեական յուրահատուկ միջավայր, որտեղ նույնպես տարածված են հանցագործությունները[4]:

Ազատազրկման սպառնալիքը չի վախեցնում նաև ազատության մեջ գտնվող, բայց դեռևս հանցագործություն չկատարած մարդկանց: Օրինակ՝ 18-րդ դարի Անգլիայում երբ որևէ մեկին կախաղան բարձրացնելիս մարդկանց սարսափեցնելու համար մեծից փոքր քշում էին հրապարակ, այնտեղ հավաքվածներից ոմանք առիթը բաց չէին թողնում, որ դատարկեն իրենց կողքին կանգնածների գրպանները: Եվ ի վերջո, չնայած ազատազրկման միլիոնավոր դեպքերին՝ հանցագործությունների թիվն ամբողջ աշխարհում աճման միտում ունի: 2000 թ. մինչև 2015 թվականը աշխարհի բանտային բնակչությունն աճել է 19,8 %-ով, այն դեպքում, երբ բնակչության թիվն աճել է 18 տոկոսով[5]:

Ազատազրկումը չի ծառայում և երրորդ նպատակին. այն չի ուղղում դատապարտյալին: Ընդհակառակը, բազմաթիվ հանցագործների հավաքելով մի հաստատությունում, որի անունը բանտ է, մենք նպաստում ենք հանցագործ վարքի մոդելների փոխանցմանը սոցիալականացման մեխանիզմների օգնությամբ:

Բանտը համընդհանուր (տոտալ) ինստիտուտ է, որովհետև այնտեղ փորձում են ամբողջությամբ վերահսկել մարդու կյանքը, սահմանափակել նրա իրավունքները:

---

[3] Տե՛ս **Фойницкий И. Я.** Учение о наказании. М., 2000, էջ 55-68:

[4] Տե՛ս **Антонян Ю.** Преступность в местах лишения свободы и ее причины // "Уголовное право", 2002, թիվ 4, էջ 101-104, **Ա. Ասատրյան**, Պենիտենցիար հանցագործությունները Հայաստանի Հանրապետությունում, publications.ysu.am/wp-content/uploads/2016/06/31/Anna_Asatryan.pdf

[5] Տե՛ս www.prisonstudies.org/.../world_prison_population_list_11t..., էջ 15:

«Տոտալ» հաստատությունը բնակության և աշխատանքի մի վայր է, որտեղ բավականին երկար ժամանակով հասարակությունից կտրված, մեկուսի և ձևականորեն վերահսկվող կյանքով ապրում են նույն իրավիճակում գտնվող մեծ թվով անհատներ[6]: Բանտարկյալների հանրույթը փորձելով պաշտպանվել հաստատության «տոտալության» ճնշումից, ձևավորում է բանտային ենթամշակույթը, որը խնդիրներ է ստեղծում բանտի անձնակազմի համար պատժի իրականացման և դատապարտյալների ուղղման գործընթացները կազմակերպելիս: Քրեագետների ուսումնասիրությունները վկայում են, որ որքան վաղ է մարդն առաջին անգամ հայտնվում բանտում, այնքան շուտ է կրկին գնում այնտեղ[7]: Նրանց մատնանշած մյուս բացասականի օրինաչափությունն այն է, որ բանտերը ժամանակի ընթացքում դառնում են հանցագործ վարքի ուսուցման համալսարաններ[8]: Չպետք է մոռանալ, որ ազատազրկման հաստատություններում դատապարտյալների պատժի կազմակերպումը հսկայական նյութական ռեսուրսներ է խլում պետություններից: Այսինքն՝ ազատազրկումը մարդկանց հանցագործներից պաշտպանելու այնքան էլ ցանկալի միջոց չէ: Այսօր ավելի քան 10,2 միլիոն մարդ գտնվում է տարբեր երկրների բանտերում՝ սպասելով դատավճռին կամ կրելով արդեն սահմանված պատիժը: 2015 թվականի տվյալներով սրանց կեսից ավելին կենտրոնացած է 8 երկրում՝ ԱՄՆ-ում՝ 2,2 մլն, Չինաստանում՝ 1,65 մլն, Ռուսաստանում՝ 640 հազ., Բրազիլիայում՝ 607 հազ., Հնդկաստանում՝ 418 հազ., Թայլանդում՝ 311 հազ., Մեքսիկայում՝ 255 հազ. և Իրանում՝ 225 հազ.: Յուրաքանչյուր հարյուր հազար բնակչի հաշվով բանտարկյալների թվով աշխարհում առաջին տեղում է Սեյշելյան կղզիները՝ 799 մարդ, այնուհետև՝ ԱՄՆ-ն՝ 698 մարդ, Թուրքմենիան՝ 583 մարդ, ՌԴ-ն՝ 445 մարդ: Այդ ցուցանիշն ամենափոքրն է Լիխտեյնշտեյնում՝ 21 մարդ: Երկրների կեսից ավելիի համար այս գործակիցը 150-ից փոքր է: Յուրաքանչյուր հարյուր հազար բնակչի հաշվով բանտարկյալների թվի ցուցանիշը աշխարհի մասշտաբով կազմում է 144 մարդ, Հայաստանի համար այդ ցուցանիշը կազմում է 131 մարդ[9]:

Վիճակագրությունը վկայում է, որ հետխորհրդային տարածքի պետությունները, այդ թվում և Հայաստանը, աչքի են ընկնում բանտային բնակչության համեմատաբար մեծ թվով: Սա հետևանք է այն բանի, որ այդ երկրներում խորհրդային տարիներին և հետագայում ազատազրկումը հանցագործների նկատմամբ կիրառվող հիմնական պատժատեսակ էր: Այլընտրանքային պատժատեսակները և պրոբացիոն համակարգը դեռ նոր են ներդրվում նշված տարածքում, այն դեպքում,

---

[6] Տե՛ս **Erving Goffman.** «Asylums». C. Nicholls & Company Ltd, 1961, էջ 11:
[7] Տե՛ս **Хохряков Г. Ф.** Парадоксы тюрьмы. М.,1991, էջ 86:
[8] Տե՛ս նույն տեղը, էջ 103:
[9] Տե՛ս www.prisonstudies.org/.../world_prison_population_list_11t...:edition, էջ 2:

երբ արևմտյան շատ հասարակություններում դրանք վաղուց են գործում: Նրանք վաղուց են համոզվել, որ ազատազրկումը նաև թանկ պատժատեսակ է, հետևաբար հնարավորության դեպքում պետք է փորձել խուսափել դրանից: Եվրոպական երկրներում մեկ մարդու ազատազրկման տարեկան գինը տատանվում է 12,000-ից մինչև 190,000 ԱՄՆ դոլար[10], իսկ ԱՄՆ-ում՝ մոտավորապես 43,000 դոլար է: Հայաստանում այդ ցուցանիշը 2013 թվականին եղել է 9,3 եվրո օրեկան կամ տարեկան մոտավորապես 4100 դոլար, որը հինգ անգամ փոքր է եվրոպական միջինից[11]:

Այո՛, ազատազրկման տեսքով պատիժը չի տալիս ցանկալի արդյունք: Ի դեմս ազատազրկման հաստատությունների՝ պետությունները ստեղծում են մի միջավայր, որտեղ դատապարտյալները ժամանակի ընթացքում ձևավորում են յուրահատուկ հասարակություն, որն ապրում է իր օրենքներով ու օրինաչափություններով և սկսում է ազդել լայն հասարակության վրա: Հետազոտությունները վկայում են, որ որքան աննորմալ է կյանքը բանտից դուրս գտնվող հասարակությունում, այնքան խիստ են բանտերում գործող նորմերը և կարծրացած: Կարելի է վստահությամբ պնդել, որ բանտային մշակույթը հակամշակույթ է, որովհետև այն փորձում է իր ազդեցությունը տարածել լայն հասարակության վրա, մասնակցել նրա կառավարմանը: Բանտային ենթամշակույթը ներառում է այն նորմերը, արժեքները, սովորույթները, ժարգոնը և ժեստերը, որոնք ստեղծվում են դատապարտյալների հանրույթի կողմից: Այդ ամենը նաև ինքնապաշտպանական նպատակ է հետապնդում: Բանտային կյանքը բազմաթիվ սահմանափակումներ է ենթադրում դատապարտյալների համար: Ազատ կյանքին սովորած մարդիկ բանտ ընկնելուց հետո փորձում են հարմարվել այդ միջավայրին և «տոտալ» ինստիտուտի ճնշմանը փորձում են դիմակայել՝ հակադրելով սեփական հանրույթի կողմից մշակված կանոնները: Անգամ բանտային միջավայրում խմբի անդամների վարքը պետք է կանխատեսելի լինի, հակառակ դեպքում համակեցությունը շատ դժվար կլինի: Պատահական չէ, որ հաստատությունում տասնութ տարին լրացրած դատապարտյալները երազում են ժամ առաջ տեղափոխվել չափահասների քրեակատարողական հիմնարկ, որտեղ սահմանված կանոններին ավելի խիստ են հետևում: Մարդը նույնիսկ բանտում իրավունք ունի անել այն ամենը, ինչ որ ցանկանում է՝ սակայն դուրս չգալով սահմանված շրջանակներից. ոչ ոք չի սողոսկում հոգիդ, ոչ ոք չի ստիպում անել այն, ինչ որ չես ցանկանում՝ ընդհանրացնում է բանտերում իր կատարած հարցման արդյունքները Օլեյնիկը[12]: Բանտն անձի խեղման

[10] Տե՛ս http://www.abc.net.am/news/2017-08-08/australia spending on prisons more../

[11] Տե՛ս http://www.aravot-en.am/2016/03/08174677/

[12] Տե՛ս **Олейник А. Н.** Тюремная субкультура в России: от повседневной жизни до государственной власти. М., 2001, էջ 13:

վտանգ է ստեղծում, քանի որ իր խնդիրների լուծումը հեշտացնելու համար այն փորձում է ամբողջովին վերահսկել բանտարկյալներին, նրանց զրկել անձնական կյանք ունենալու հնարավորությունից: Մասնավոր կյանքի տարածությունն այստեղ հասցված է նվազագույնի: «Նվաստացումը կալանավորներին վախի և հնազանդության մեջ պահելու լավագույն միջոցն է բանտում,- նշում է Օլեյնիկը, -…անհատին հնազանդեցնել, նրան հասկացնել, որ ինքը կամազուրկ է...»[13]: Հնազանդեցման այդ գործընթացը սկսվում է հաստատություն ժամանելու առաջին պահից՝ անձնական հագուստի փոխարինում հաստատության նախատեսած համազգեստով, մազերի խուզում, իրավունքների և պարտականությունների հստակեցում և այլն: Ոմանց կողմից հանցագործություն կատարելու և մարդկանց վնասներ պատճառելու փաստն առաջացնում է օրինապահ հանրույթի լիովին արդարացի ցանկությունը՝ եթե ոչ ավելի խիստ, ապա գոնե համարժեք պատիժ սահմանելու մասին: Նրանց բոլորովին չի հետաքրքրում այն փաստը, որ այս մարդիկ հանցագործ չեն ծնվել, և նրանց ճանապարհն ինչ-որ պահից սկսած ծուռ է ընթացել այն պատճառով, որ հասարակությունը նրանց հանդեպ ժամանակին պատշաճ ուշադիր ու հոգատար չի եղել, որ ինչ-որ բանեբում վրիպումներ են թույլ տրվել և այլն: Պատիժն ազատազրկման տեսքով բումերանգի էֆեկտ ունի. անզգույշ լինելու դեպքում այն հարվածելու է կիրառողին:

Ըստ Է. Գիդենսի, բանտից ազատվածների 60 տոկոսը իր նախորդ հանցագործությունը կատարելուց հետո 4 տարվա ընթացքում նորից ձերբակալվում է[14]: Այսինքն, եթե մենք հանցագործներին պարզապես խցկում ենք բանտերը և հոգ ենք տանում, որ այնտեղից չփախչեն, ապա նրանց ուղղման խնդիրը ոչ միայն չենք լուծում, այլև էլ ավելի ենք դժվարացնում: Բանտերը բազմաթիվ զրկանքներ ու անհարմարություններ են պատճառում իրենց բնակիչներին ու անիրագործելի դարձնում նրանց ուղղման իդեալը: Լավագույն դեպքում դրանք կարող են ինչ-որ չափով ետ պահել պոտենցիալ հանցագործներին իրենց մտադրություններից: 1968 թվականին լույս տեսավ հոգեբույժ Կառլ Մենինգերի «Պատժի հանցավորությունը» գիրքը, որտեղ նա հիմնավորում է այն տեսակետը, որ մարդուն ազատազրկելով՝ հասարակությունը չի լուծում հանցագործությունների կրճատման խնդիրը: Ավելին, ազատազրկման ձևով պատիժը հանցագործություն է, քանի որ դրանով հանցագործին ավելի ենք հրում դեպի հանցավոր ճանապարհ, նրա վրա վատնում ենք օրինապահ քաղաքացիների գումարները, զրկանքներ պատճառում նրա ընտանիքի անդամներին[15]: Հարկավոր է լուծել ազատազրկում - ուղղում կոնֆլիկտը, ստեղծել պատժիչ այնպիսի տեխ-

[13] Նույն տեղում, էջ 15:
[14] Տե՛ս **Гидденс Э.**, նշվ. աշխ., էջ 105:
[15] Տե՛ս **Karl Menninger**, The Crime of Punishment, Viking Press, էջ 68:

նոլոգիաներ, որոնք շեշտը դնեն ուղղման վրա: Քրեագիտությունը որոնումների մեջ է, և այդ ճանապարհին անընդհատ նոր տարրեր են հայտնվում քրեական պատիժների համակարգում:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունն սկսեց ինտեգրվել եվրոպական կառույցներին: Դա սկիզբ դրեց բարեփոխումների հսկայածավալ գործընթացի, որի նպատակը եվրոպական ինստիտուցիոնալ մշակույթի և արժեքների ներդրումն էր Հայաստանում: ՀՀ քրեական արդարադատության համակարգն առաջիններից մեկն էր, որն ընդգրկվեց այդ միջոցառումների շրջանակ: Սկսվեց եվրոպական ստանդարտների ներդրումը, որը ենթադրում էր նաև վերանայել իրավախախտների ուղղման գործընթացի կազմակերպումը: Նոր մոտեցումները պահանջում էին ներդնել ազատազրկման այլընտրանքային նոր պատժատեսակներ և կիրառել դատապարտյալների ուղղման ու սոցիալական վերականգնման ավելի արդյունավետ ու արդիական տեխնոլոգիաներ և միջոցներ: Քրեակատարողական բոլոր հիմնարկներում ստեղծվեցին սոցիալական, իրավական և հոգեբանական աշխատանքների (ՍԻՀԱ) բաժիններ, որոնք պետք է աշխատանք տանեին կալանավորված և դատապարտված անձանց ուղղման ու վերականգնման ուղղությամբ: Ենթադրվում էր, որ դրանց աշխատակազմերը պետք է համալրվեին սոցիալական աշխատողներով, իրավաբաններով և հոգեբաններով: Սակայն եթե վերջին երկուսի խնդիրը լուծվեց առանց լուրջ դժվարությունների, ապա սոցիալական աշխատողի դերը ստանձնեցին նախկինում համակարգում այլ աշխատանք կատարող մարդիկ՝ մասնակցելով որոշ վերապատրաստման դասընթացների: Պատճառը մասնագիտական համապատասխան պատրաստություն ունեցող կադրերի բացակայությունն էր, ինչպես նաև նրանց ընտրության հարցում քրեական պատիժների իրականացման վարչության ղեկավարության չափազանց զգուշավոր դիրքորոշումը. անպայման արական սեռի լինեն, զինապարտ և այլն: Այսպիսով, ՀՀ քրեակատարողական բոլոր հիմնարկներում ձևավորված ՍԻՀԱ բաժինները սկսեցին իրականացնել այն գործառույթները, որոնք վերագրվեցին նրանց ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. թիվ 44 հրամանով, իսկ հետո վերանայվեցին 2016 թ. թիվ 279-Ն հրամանով[16]: Իրականում այդ հրամանով նախատեսվող միջոցառումները սոցիալական աշխատանքում վաղուց իրականացվող սոցիալական դեպքի վարման գործընթացի բովանդակությունն էին կազմում, երբ շահառուն ազատազրկված իրավախախտն է: Ուղղակի, ինչպես և այլ դեպքերում, սոցիալական աշ-

[16] Տե՛ս www.arlis.am // ՀՀ արդարադատության նախարարի հրամանը կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին:

խատանքի մասին իրազեկվածության ցածր մակարդակը խանգարեց, որ իրերն իրենց անուններով կոչվեն: Վերը նշված հրամանում և համապատասխան նորմատիվ փաստաթղթերում անընդհատ շրջանառվում է «սոցիալական աշխատանքներ» բառակապակցությունը՝ բոլորովին էլ նկատի չունենալով մասնագիտական գործունեությունը: Իրականում սոցիալական աշխատանքն այն մասնագիտությունն է, որն արմատական բարեփոխումներ կարող է կատարել ազատազրկվածների ուղղման ու սոցիալական վերականգնման գործընթացներում: Նրանց բոլորովին էլ հարկավոր չէր հրամանով հիշեցնել, թե որ դեպքում անհատական աշխատանքի մեթոդը կիրառել, որ դեպքում՝ խմբայինը[17]: Համակարգում անհարկի շեշտվել է հոգեբանական մոտեցումը, այն դեպքում, երբ ազատազրկվածների խնդիրների մեծ մասը սոցիալական է: Այս թյուրըմբռնումը նկատվում է նաև ազատազրկվածների շրջանում: Որևէ խնդիր առաջանալու դեպքում նրանք առանց տարբերակման դիմում են հոգեբանի օգնությանը[18]: Սոցիալական աշխատանքի մասին հանրային իրազեկվածության ավելացմանը զուգահեռ՝ հավանաբար այս խնդիրը նույնպես կլուծվի: Արևմուտքում ազատազրկման հիմնարկներում հոգեբանական ծառայությունները վաղուց առանձնացել են սոցիալական աշխատանքի ծառայություններից: Սոցիալական աշխատողները իրենց վերականգնողական գործունեության ընթացքում կիրառում են բազմաթիվ ծրագրեր ու գործիքներ, որոնց արդյունավետությունը բազմիցս ստուգվել ու հաստատվել է: Ազատազրկման հիմնարկները նրանց տրամադրության տակ են դնում հսկայական նյութական և հոգևոր ռեսուրսներ, առանց որոնց սոցիալական աշխատողների վերականգնողական գործունեությունն անպտուղ կլիներ: Հայաստանի համապատասխան հիմնարկներում ոչ միայն մասնագետ սոցիալական աշխատողներ չկան, այլև վերականգնողական գործունեություն իրականացնելու համար պայմաններն են անբավարար: Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների հանրակրթությունը և մասնագիտական կրթությունը կազմակերպելու հնարավորություններ չկան, աշխատանքային հմտությունների զարգացման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Դատապարտյալների ուղղումը և վերականգնումը միայն քարոզչությամբ հնարավոր չէ իրականացնել: Հարկավոր է զարգացնել նրանց մարդկային և սոցիալական կապիտալները, պաշտպանել նրանց իրավունքները և արժանապատվությունը, հոգ տանել առողջության և հանգստի մասին: Բանտերում նման խնդիրների լուծումը շատ դժվար

[17] Տե՛ս նույն տեղը:

[18] Տե՛ս «Սոցիալական, հոգեբանական և իրավական վերականգնողական աշխատանքների արդյունավետությունը ՀՀ քրեակատողական համակարգում» սոցիոլոգիական հետազոտության արդյունքները, «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպություն, Եր., 2012:

է, երբ «դրսի» բնակչության մոտ 40 տոկոսը աղքատ է ու տառապում է սոցիալական բազմաթիվ խնդիրների պատճառով: Արդարացիորեն հարց է առաջանում. ինչո՞ւ պետք է առանց այդ էլ աղքատիկ միջոցները ծախսել հանցագործների վրա: Այսօր ՀՀ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներից շատերը նման դիրքորոշում ունեն, ինչը խոչընդոտում է համակարգում բարեփոխումները: Սոցիալական աշխատողի համար նման դիրքորոշումն անընդունելի է: Օրինակ՝ մի քանի տարի առաջ, երբ փորձում էինք «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ներդնել մասնագիտական կրթության հեռավար համակարգ, հսկիչները տրտնջում էին, որ իրենց սովորեցնելու փոխարեն փորձում ենք այդ հանցագործներին սովորեցնել: Չպետք է մոռանալ, որ վերջին հաշվով մարդիկ հայտնվում են բանտերում մինչ այդ ունեցած սոցիալական անհամար խնդիրների ազդեցության պատճառով, իսկ ազատազրկումն էլ ավելի է մեծացնում նրանց խոցելիությունը: Հետևաբար, եթե մեր վերաբերմունքը նրանց նկատմամբ խտրական լինի, ապա բումերանգի էֆեկտը կսկսի գործել: ՀՀ քրեակատարողական համակարգը դեռևս լիովին չի թոթափել խորհրդային պատժիչ համակարգի թերությունները: Դեռ երկար պետք է պայքարել, որպեսզի հին կարծրատիպերը փշրվեն, ու նոր արժեհամակարգը դառնա ուղղիչ ու վերականգնողական գործունեության հիմքը: Առայժմ վերականգնողական ծառայությունները համարյա ոչինչ չեն անում ազատազրկվածների ուղղման համար: Ընդհանրապես, քանի դեռ մասնագետ սոցիալական աշխատողներով չեն համալրվել վերականգնողական ծառայությունները, նշված խնդիրները չեն լուծվի: Սոցիալական աշխատանքը՝ որպես մասնագիտություն, զինված է բազմաթիվ մեթոդներով և տեխնոլոգիաներով, որոնք տարբեր հասարակություններում հաջողությամբ օգտագործվում են իրավախախտների ուղղման ու սոցիալական վերականգնման գործընթացներում: Ազատազրկում- ուղղում կոնֆլիկտի լուծումը հնարավոր է, եթե այլընտրանքային նոր պատժատեսակներ սահմանվեն, իսկ ազատազրկման հաստատություններում պայմաններն ավելի տանելի դառնան և ներդրվեն բանտարկյալների ուղղման ու վերականգնման նոր ու արդյունավետ տեխնոլոգիաներ: Հարկավոր է ոչ միայն հասնել այն բանին, որ հանցագործներն առանձնացվեն հասարակությունից ու գտնվեն հսկողության տակ, այլև նրանց համար պահպանվեն բնականոն կյանք վերադառնալու հնարավորությունները: Այսօր ուղղման ու վերականգնման տրամաբանությունը պահանջում է բոլորովին այլ մոտեցումներ: Սոցիալական աշխատանքի մոտեցումն այս հարցում այսպիսին է. քանի որ մարդու վարքային շեղումների արմատները նրա սոցիալական միջավայրում են, իրավախախտների ուղղման լծակները այդ նույն միջավայրում կամ անձի մեջ պետք է փնտրել: Ազատազրկվելիս դատապարտյալը հայտնվում է

քրեակատարողական հաստատության սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայության տեսադաշտում: Սոցիալական աշխատողը պետք է ստանձնի նրա դեպքի վարումը: Սա նշանակում է, որ նա պետք է բացահայտի ազատազրկվածի կարիքները և, ելնելով ազատազրկման տևողությունից, կազմի պատժի իրականացման պլան: Նպատակը մեկն է. բանտում գտնվելու ժամանակահատվածն օգտագործել բանտարկյալին ուժեղացնելու և նրան ազատությանը նախապատրաստելու համար, որպեսզի նա ուղղվի, և նվազագույնի հասցվի կրկնահանցագործության հավանականությունը: Դատապարտյալին փոխելու հիմնական մեխանիզմներն են կրթական և աշխատանքային ծրագրերը, սոցիալական ցանկալի կապերի ստեղծումը և պահպանումը, ուղեկցող այնպիսի խնդիրների լուծումը, ինչպիսիք են, օրինակ, թմրանյութերից կամ ալկոհոլից կախվածությունը, ագրեսիվ վարքագծի հաղթահարումը և այլն: Իր աշխատանքում նա պետք է հաշվի առնի դատապարտյալների անհատական առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են նրանց տիպերով: Դրանք չորսն են՝ սոցիալական, հակասոցիալական, կեղծ սոցիալական և ապասոցիալական: Սոցիալական բանտարկյալը սովորաբար հանցանք է գործում անձի դեմ և իր հանցագործ կարիերան սկսում բավականին ուշ տարիքում: Նա խիստ կապված է ընտանիքին և ընկերներին, մեղքի զգացում է ապրում և պատրաստ է համագործակցելու ուղղիչ հիմնարկի աշխատակիցների հետ: Նրա հակադիր տիպն է հակասոցիալական բանտարկյալը: Նա սովորաբար արդեն ունի բանտարկության փորձ, որպես կանոն, դատապարտվում է գողության համար, սերում է անբարեկեցիկ ընտանիքից և հանցագործ ուղու վրա է կանգնում վաղ տարիքից, չի ցանկանում համագործակցել ուղղիչ անձնակազմի հետ:

Կեղծ սոցիալական բանտարկյալն արդեն փորձառու հանցագործն է, որը կարիերան սկսում է այսպես կոչված «սպիտակ» հանցանքներից՝ խարդախություն, տնտեսական հանցագործություններ: Այս տիպը գտնվում է սոցիալական և հակասոցիալական տիպերի միջև:

Ապասոցիալական դատապարտյալները տարաբնույթ հանցագործություններ կատարած անձինք են, հաճախ վաղ են սկսում հանցագործ կարիերան, հակված են համագործակցելու, չեն վստահում որևէ ծրագրում անհատական ներառմանը, կարգապահ չեն: Իրենց միկրոմիջավայրին՝ ընտանիք, համայնք, քիչ են կապված և ավելի շատ են զգում ուղղիչ անձնակազմի օգնության կարիքը, քան սոցիալական տիպի ներկայացուցիչները[19]:

Ազատազրկման հաստատություններում սոցիալական աշխատողների գործունեության սկզբից ի վեր երբեմն հոռետեսական տեսակետներ են արտահայտվում նրանց հաջողության մասին, սակայն ընդ-

[19] Տե՛ս **B. Williams**, Work with Prisoners. Venture Press, էջ 73-78:

հանուր կարծիքը, որ շարունակում է գերիշխել, լավատեսական է. սոցիալական աշխատողները կարող են և կարևոր դեր են կատարում ազատազրկվածների ուղղման և վերականգնման գործում: Իրենց աշխատանքում նրանք շեշտը դնում են շահառուի գործառական կարողությունները մեծացնելու վրա: Ամենակարևորը շահառուի մեջ փոխվելու ցանկություն առաջացնելն է: Եթե դա հաջողվում է, ապա մնացածը ռեսուրսների խնդիր է: Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս հաղթահարելու ազատազրկվածի ֆիզիկական սահմանափակումները և օգտագործելու լայն հասարակության մեջ առկա բոլոր ռեսուրսները:

Անհատական և խմբային աշխատանքի հմտությունները կարող են հաջողությամբ զուգակցվել և արդյունավետորեն գործադրվել բանտարկյալների տարաբնույթ խնդիրները լուծելիս: Իրավունքների պաշտպանություն, առողջության պահպանում, ընտանիքի հետ կապի հաստատում, հանրակրթության և մասնագիտական կրթության կազմակերպում, հանգիստ և ժամանց. ահա խնդիրների այն ոչ լրիվ ցանկը, որոնք հասցեագրված են ուղղիչ հաստատության սոցիալական աշխատողին: Իհարկե, ազատազրկման հաստատությունում սոցիալական աշխատողը, զարգացնելով դատապարտյալի սոցիալական հմտությունները, նրան նախապատրաստում է ազատ կյանք վերադառնալուն: Շատ կարևոր է, որ դրանից հետո հասարակությունը պատրաստ լինի նրան ընդունելու, որ նրան վստահեն, չպիտակավորեն, ապրելու և աշխատելու տարրական պայմաններ ստեղծվեն: Այս առումով շատ խնդրահարույց է հայաստանյան ներկա իրավիճակը՝ մեծ չափերի հասնող աղքատություն և գործազրկություն, որոնք պարարտ հող են, որ բանտից վերադարձողների մեջ պահպանվող կրկնահանցագործության ռիսկը շատ արագ իրականություն դառնա: Որպեսզի ստիպված չլինենք նոր բանտեր կառուցել ու ամեն մի բանտարկյալի վրա օրական 5000 դրամ և ավելի գումար ծախսել, շատ ավելի ճիշտ կլինի այդ միջոցներն ուղղել պոտենցիալ բանտարկյալների կենսապայմանները բարելավելուն: Իրավախախտ վարքի կանխարգելումը շատ ավելի դյուրին և արդյունավետ է, քան ուղղումը և վերականգնումը:

Քրեակատարողական հիմնարկների ՍԻՀԱ բաժիններն անհրաժեշտ մասնագետներով համալրելով և նրանց ռիսկի գնահատման համապատասխան գործիքներով զինելով՝ կմեծացնենք նրանց դերը դատապարտյալների ուղղման ու վերականգնման գործընթացում, էապես կբեռնաթափենք քրեակատարողական հիմնարկները, իսկ որ ամենակարևորն է՝ ազատազրկումն իսկապես կծառայի իր հիմնական նպատակին:

Բանալի բառեր – *հանցագործություն, պատիժ, բանտ, ազատազրկում, ուղղում, վերականգնում, վերինտեգրում, սոցիալական աշխատանք*

АРТАК ХАЧАТРЯН – ***Социальная работа и конфликт «лишение свободы – исправление».*** **–** В статье затрагивается проблема исправления преступников. На основе проанализированной информации сделан вывод, что лишение свободы не способствует исправлению заключённых и не создаёт предпосылок для их реинтеграции в общество. С одной стороны, преступность во всём мире растёт, с другой – наказание в виде лишения свободы пока ещё повсюду преобладает. Общество расходует огромные финансовые средства на содержание заключённых, не добиваясь их исправления. Социальные работники смогут кардинально изменить ситуацию, если создать в исправительных учреждениях Армении благоприятные условия для реабилитационной деятельности.

Ключевые слова: *преступление, наказание, лишение свободы, исправление, реабилитация, реинтеграция, социальная работа*

ARTAK KHACHATRYAN – ***Social Work and the Imprisonment - Correction Conflict.*** **–** The article deals with the problem of correction of criminals in prisons. Based on the analysis of information, it is concluded that the imprisonment of offenders does not contribute to their correction, moreover, it does not create the prerequisites for their reintegration into the society. On the one hand, crime is growing all over the world, on the other hand, an imprisonment is still a prevalent form of punishment in all societies. The societies spend huge financial resources on the maintenance of prisoners, but without serious success in their correction. Social workers will be able to radically change the situation in the penitentiary system of Armenia if there are adequate conditions for their rehabilitative activities.

Key words: *crime, punishment, prison, imprisonment, correction, rehabilitation, reintegration, social work*